

• ԳՐԱԽՈՍԱԿԱՆ •

ԱՐՀԵՍՏՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ: Գրեց՝
Վ. Ա. Աբրահամյան: Լաքավազմ,
փոքր քառաձուլ, նկարազարդ, էջ 386: 1956, Երևան:

Ներածութեան մէջ հեղինակը կը գրէ. «Երկար ժամանակ է, ինչ մենք զբաղվում ենք Հայաստանի արհեստների եւ նրանց զարգացման պատմութեան հարցերով միայն, ու մեր համեստ ուժերը նվիրել ենք այդ խնդրի լուսարանմանը, զերազատութեան տալով ամենակարեւոր եւ համեմատաբար քիչ ուսումնասիրվածներին՝ մետաղագործութեանը եւ ոստայանկութեանը: Մյուս արհեստներին անդադարձել ենք ոչ այնքան խորացրած ձևով ոչ միայն այն պատճառով, որ նրանք երկրորդական տեղ են զբաղեցնում, որքան այն պատճառով, որ դրանք առավել չափով ուսումնասիրված են հատուկ մասնագետների կողմից, ինչպէս՝ շինանյութը, կավագործութեանը եւ այլն» (էջ 6ա):

Հոս սակայն պէտք է դիտել տա՛մ, որ ոստայանկագործութեան գոնէ գորգերու մասին Սփիւռքի մէջ եղած հայերէն կամ ֆրանսերէն ուսումնասիրութիւններ եւ զիրքեր անծանօթ մնացած են հեղինակին: Օրինակ իմ ԳՈՐԳԸ ՀԱՅՈՑ ՄՕՏ (Ս. Ղազար, 1947). յետոյ բաղմամբիւ յօդուածներ ողբացեալ Արմենակ Սաղաթեանէ, Գարեգին Սրբ. Յովսէփեանէ եւ իմ կողմէ հրատարակուած՝ զանազան պարբերականներու մէջ: Նոյնպէս մետաղագործութեան, ոսկերչական եւ արծաթագործական ճիւղերուն մասին: Սփիւռքի գրողներէն միայն ողբացեալ Հ. Հացունիի ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԻՆ ՀԱՅ ՏԱՐԱԶԻ մեծարժէք գործը նկատի ունեցած է հեղինակը: Կերեւալ թէ մնացեալ գործերը անմատչելի եղած են:

Գործին առաջին զուխը նուիրուած է «Համառօտ ակնարկ Միջնադարյան Հայաստանի Տնտեսական-Քաղաքական կյանքի մասին» (էջ 13-39): Հոս ամփոփ կը տրուի շահեկան նիւթը յաջող կերպով:

Երկրորդ զուխը նուիրուած է Մետաղագործութեան: Նախ կը խօսի Հուլիոսի մասին, յետոյ կարգով դարբնութեան, ալսինքն երկաթագործութեան մասին: Զիս մասնաւորաբար կը հետաքրքրէ մրկրատներու մասին (Դուլինի պեղումներէն գտնուած) շատ պզտիկ տեղեկութիւնը: Մկրատները վաղուց գործածուած են հայ արհեստագործներէ, որոնց ձեւը՝ դատելով Երեւանի Պետ. Թանգարանին մէջ պեղումներէ հանուած նմուշներէն՝ Ժ-ԺԳ. դարէն ի վեր փոխուած է: Սակայն հայ արհեստագործը կը գործածէր ճոխ կերպով զարդարուած մկրատներ: ԺԷ. դարէն ընտիր նմուշ մը ունիմ իմ Հայ հնութիւններու հաւաքածոյիս մէջ: Երկաթ մկրատը դաւաճակեալ արուեստով զարդարուած է ոսկի թելով եւ մկրատին տիրոջ հայատառ անունն ալ վրան:

Յաջորդ հատուածը Պղնձագործութեան մասին է: Ինծի ծանօթ առաջին փորձն է Հայոց մէջ շատ տարածուած այս արհեստին մասին՝ Աբրահամյանի այս ուսումնասիրութիւնը: Ընդարձակ տեղ տուած է Անիի, Դուլինի պեղումներէն հանուած եւ Երեւանի Թանգարանը գտնուող պղնձէ իրերու մասին. սակայն իրեն բոլորովին անծանօթ մնացեր է Հայաստանի ուրիշ մասերուն մէջ զարգացած այդ արհեստարուեստը: Օրինակ, ոչ մէկ խօսք Եւդոկիոյ (Թողաղ), Վանի, Երզնկայի, Տիգրանակերտի, Այնթապի հնադարեան եւ խիստ զարգացած պղնձագործութեան մասին, ինչպէս նաեւ Պարսկահայաստանի, որոնցմէ բաղմամբիւ մեծարժէք նմուշներ հասած են մեզի. որոնցմէ հին ու արժէքաւոր հաւաքածոյ մը ունիմ հնութեանց հաւաքածոյիս մէջ, բոլորն ալ հայերէն արձանագործութեամբ եւ յիշատակարանով:

Խիստ շահեկան է Զինագործութեան փերաբերող մասը, որուն կը յաջորդէ Ոսկերչութեան մասը, զանազան բաժանում-

ներով եւ արծաթագործութեամբ միացած, որ կը զբաղեն էջ 85-155: Ճոխ է նկարներով: Դժբախտաբար չունի այն կատարելութիւնը որ վաղնկալուէր: Հեղինակին պակսեր են «Գեղունի»ի, «Հասկ»ի (Գիտական), «Անահիտ»ի, «Հայ. Եկեղեցի»ի մէջ հրատարակուած բաղմամբիւ ուսումնասիրութիւններն այս նիւթին մասին: Ուրեմն բաղմամբիւ արժէքաւոր հայ ոսկերչական եւ արծաթագործական իրեր, օրինակ Ս. Ղազարի Թանգարանէն կամ իմ Թանգարանէս, անծանօթ մնացեր են հեղինակին: Նկար 42ի «Գիւլի արծաթէ թասակ»ը վնդական չէ իր նախատիպին մէջ, այլ եկեղեցական անօթ մը՝ որ յետոյ իբր այդ գործածուած է: Ասոնցմէ իմ հաւաքածոյիս մէջ ալ ունիմ: Կնոջական թասակները իբր գլխադարձ տարբեր են ձեւով:

Հայաստանէն դուրս նշանակուած ոսկերչական Օջախներու շարքին հաւանաբար կարեւորագոյններուն մէջ նշանակելու էր Կեսարիան, Թողաղը, Տիգրանակերտը, որոնք յանուանէ իսկ չեն յիշուած: Հաղիւ ակնարկութիւն կայ Պուլկարահայ եւ մասնաւորաբար Ֆիլիպէահայ հին եւ անուանի ոսկերչութեան մասին: Վերջապէս Ղրիմ եւ Տրապիզոն ոսկերչական կեդրոններ եղած են:

Խիստ ցաւալի է որ կիտուածագործութեան մասը՝ գունաւոր եւ սեւ՝ անգոհացուցիչ է: Հայերը շատ նշանաւոր եղած կ'երեւան այդ արհեստներուն մէջ:

Երրորդ զուխը նուիրուած է Ոստայնաւորութեան: Նախ կը խօսի նիւթերու մասին, յետոյ գործիքներու մասին: Նիւթերը կարելի էր աւելի ընդարձակել: Կարելի էր եւ պէտք էր որ Հայ ներկարարութեան պատմութիւնը, որ խոշոր հատուած մը կրնար ըլլալ, մասնաւորաբար գրուէր: Նկար թիւ 70ը շատ խոշոր նպաստ մըն է գորգարուեստին Հայոց տուած նպաստին համար, որ սակայն միայն կը ներկայացուի առանց զիտին արուեստին մէջ խորանալու: Էջ 189ը յիշուած 1202էն Հայ-

կական գորգը Զի ԳՏՆՈՒԻՐ Վիեննայի քանդաքանում, այլ կը պատկանէր Միւթարեաններուն, զոր վաճառեցին անհատի մը, եւ գորգը այժմ կարծեմ կը դրուուի Փրանսա:

Յաջորդ հատուածը գործուածքների նուիրուած՝ կարելի էր նոյնպէս ընդարձակել եւ ճոխացնել, սակայն ըստ երեւոյթին՝ աղբիւրներու պակասը արգելք եղած է հեղինակին: Անմիջապէս հոս շեշտեմ, որ հայկական հին ձեւագիրներու կողքերուն մէջ աղուցուած ընդհանրապէս ընտիր դիպակի, կերպասի կամ տպածոյի նմուշները անպատճառ Հայկական չենք կրնար նկատել, եւ կրնան եկած ըլլալ Եւրոպայէն, Հնդկաստանէն, Պարսկաստանէն, Բիւզանդիոնէն, Զինաստանէն: Ատիկա անտարակոյս ապացուցանելու համար յոյնեցուցիչ աշխատանք պէտք է կատարուի: Տպածոյ (Դաշածոյ) կտորներու մասին ահալին նիւթ կայ, որ մատչելի չէ եղեր հեղինակին: Ասիկա խիստ ցաւալի է: Ոչ մէկ խօսք կայ Թողաղի (Եւդոկիոյ) մեծահամբաւ եւ շատ զարգացած տպածոյի արհեստին մասին, որմէ մեզի հասած են մեծապէս կարեւոր նմուշներ, ինչպէս իմ հաւաքածոյիս, նոյնպէս նաեւ զանազան եկեղեցիներու մէջ իբր վարագոյր: Զեմ գիտեր ինչո՞ւ ասիկա դուրս ձգուեր է:

Անդնագործական արուեստին մասին, որուն մէջ հայ իգական սեռը այնքան պատուարեր տեղ ունի, հեղինակը շատ համառօտ է: Իր ներկայացուցած ձեւով խիստ անգոհացուցիչ:

Ոստայանկութեան մասին հեղինակը կ'աւարտէ առանց գոնէ համառօտ հատուածներով ծանրանալու Երզնկայի պուգերամներուն եւ մանուսաներուն վրայ, չի յիշեր Խարբերդի եւ Լեհահայոց ոսկերի մետաքս գորգերը ու գործուածքները, Շատախի շալերը, Մոկսի եւ Վանայ կապերուածեւ ձեւագործները, որոնք ծանօթ էին այլուր ալ: Ոչ իսկ յանուանէ կը յիշուին Այնթապի եւ Մարաշի մեծահամբաւ ձեւագործները՝ բամպակ կտուի վրայ:

Ձի յիշուելը Պոլսոյ նորարարական հնադար-
եան բարձրը, ոսկեթել անձեռոցները,
զմայլելի ժանեակները, ոսկեթել և գու-
նազեղ եկեղեցական հագուստները:

Յաջորդ գլուխը ինծի համար լաւագոյն
է իր շահեկանութեամբ, նիւթերու նորու-
թեամբ: Սակայն հոս ալ ոչ իսկ յանուանէ
յիշուած են ինչիսկի և Կոնստանդինոպոլի աշխար-
հածանօթ կաւագործական իրերը և ար-
ուեստը: Իսկ հայկական մեծարժէք ապա-
կեղործական հին արուեստը հազիւ երկու
սիւնի և մէկ նկարի արժանացեր է:

Հետզհետէ կը խօսի քարագործութեան,
հիւսնութեան, կաշեգործութեան մասին,
զժրախտարար պակասաւոր և խիստ հա-
մառօտ:

Գործը կ'աւարտի հաւքաւորեալ մա-
սին հատուածով մը, որուն կը յաջորդեն
յաւելուածներ Հայաստանի մէջ արհեստ-
ներու տեսակներուն մասին, ձեռագործի
մէջբերումներով: Վերջապէս ուսերէն
ամփոփում մը և ցանկեր:

Յանկալի պիտի ըլլար քանի մը խօսքով
ներկայացումներ դառնել արոյրագործու-
թեան, անագագործութեան, կնքագոր-
ծութեան, ականագործութեան նման
մանր ալ հետաքրքրական արուեստներու
մասին ալ: Հայերը եղած են ճարտար ար-
հեստաւորներ թաւազգործութեան մէջ:
Սկիւտարի մէջ անոնց ժէ. և ժԲ. դարու
արտագործիչները խոշոր համբաւ ու-
նին: Թաւազգործութիւնը անտարակոյս
Հայաստանի մէջ ալ զարգացած արուեստ
մըն էր, ինչպէս որ հնագոյն և հայանը-
կար ձեռագործական նմոյշներ ցոյց կու
տան:

Կնքագործութեան պատրաստութեան մէջ
անտարակուսելի փերպով կարեւոր տեղ
ունին հայ արհեստաւորները: Վկայ այն
նուրբ կնքագործութեան փորագրութիւնները,
որոնք հասած են մեղի և մաս կը կազմեն
հաւաքածոներու, օրինակ՝ ինչպէս իմս:
Յիշեցնեմ որ կնիքներ մարդուն մահուան
հետ կը փճացուէին ընդհանրապէս, որ-

պէտքի ուրիշի ձեռք չիյնան և չհա-
զործուին:

Վերջապէս պէտք էր որ հատուած մը
նուիրուէր հայկական կարասիներու և
անոնց արհեստին:

Թող ներուի մեղի եթէ քիչ մը պահանջ-
կոտ կ'երեւինք: Պատճառը պարզ է: Խոր-
հրդային Հայաստանի սահմաններէն ներս
գործող հեղինակները՝ որոնք պետական
վարձը կը ստանան, վստահ են որ իրենց
աշխատութիւնը նիւթական պատճառնե-
րով չհրատարակուելու վախը չունի:
Պէտք է որ աւելի ընդարձակ և աւելի խը-
նամեալ գործեր տան: Վերջապէս իրենց
տրամագրութեան տակ ունին ոչ միայն
կատարելագոյն տպագրական գիրքերու
հաւաքածոյ, այլ և խիստ խոշոր և վա-
րեւոր ձեռագործական հաւաքածոյ: Պետա-
կան Թանգարանին ճոխ և մեղի անմատ-
չելի հնութիւնները իրենց տրամագրու-
թեան տակ են: Ինչպէս իրենց տրամա-
գրութեան տակ են նորագոյն պեղումնե-
րու տուեալները, վայրերը, տեղեկագրու-
թիւնները: Ասոնցմով անտարակոյս այս
հրատարակուածէն աւելի մանրակրկիտ,
գոհացուցիչ և ընդարձակ գործեր կարե-
լի է պատրաստել:

Բնական է եղածին համար ալ շատ և-
րախտապարտ ենք: Եթէ միայն եղածն
իսկ կարելի ըլլար ձեռք բերել: Աւա՛ղ, ի
զուր են մեր ճիգերը գոնէ նոր հրատա-
րակուած նման հատորներ ձեռք բերելու:
Իսկ մեր ձեռք բերածներուն ընթերցման
ընթացքին կը հանդիպինք աղբիւրներու
(հրատարակեալ) որոնց իրենց հրատարա-
կութենէն տարիներ վերջ առաջին անգամ
յանուանէ կը ծանօթանանք...:



ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՊԱՐՍԿԵՐԷՆ ՀՐՈՎԱՐ-
ՏԱԿՆԵՐԸ: Պրակ առաջին ժե-ժՁ դար:
Կազմեց՝ Հ. Դ. Փափագեան: Էջ 316:
Ուրաքալ, լաքակազմ, Երեւան, 1956:

Շահեկան հրատարակութիւն մը, որուն

թուղթը իցիւ թէ աւելի տոկուն ըլլար:
Հայկական դիւանական թուղթերու հրա-
տարակութիւնը խիստ վարեւոր պակաս
մըն է, որ վերջապէս կը սկսուի նման
հրատարակութիւններով: Յուսանք որ այս
առաջին հատորին վր յաջորդեն միւսներն
ալ:

Գործին սկիզբը Փափագեան կու տայ
աշխատուած յառաջաբան մը: Ասիկա ար-
ժէքաւոր է իր բացատրութիւններով և
լուսարանութիւններով, որով բնագիրնե-
րը աւելի ըմբռնելի կ'ըլլան: Ընդամենը 23
վաւերագրութիւններ ներկայացուած են: Ա-
սոնց մէջ հնագոյնը 1449 թուականով Գա-
րա-Գոյունլու Սուլթան Չահաշահէն Տա-
թելի և Վաղագնի վանքային հողերուն
և անոնցմէ ստացուած բերքերուն մասին:

Որքան ալ որ շահեկան են, ցաւալի է
որ դիւանական թուղթերու այս շարքը ա-
ւելի վանքապատկան հողային խնդիրնե-
րու մասին է և քիչ քան կայ հարկային
(ընդհանուր), եկեղեցական, առեւտրա-
կան, արհեստակցական նիւթերու մասին:
Անտարակոյս այսքանին համար ալ մե-
ծապէս երախտապարտ ենք: Ընդհանրա-
պէս մեր վանքերուն դիւանները անխնամ
պահուած, յաճախ փճացուած, շատ բան
զեն հասցուցած մեղի: Այս տխուր վի-
ճակին պատճառներուն մասին այժմ ալ
ևս խօսիլը աւելորդ յոգնութիւն է միայն:

Փափագեան գործին կցած է մանրա-
կրկիտ ծանօթութեանց մաս մը, ինչպէս
նաեւ կենսական բառարան մը օտար բա-
ռերու: Վերջապէս ուսերէն թարգմանու-
թիւնը և բնագիրներու արտահանութիւ-
նը: Գործը կատարեալ կ'ըլլայ իր անուա-
նացանկով:

Թող ներուի մեղի եթէ դրախտականը
դարձեալ կը փակենք հին հին յանկերգով
Խորհ. Հայաստան հրատարակուած գիր-
քերուն յատուկ: Չեմ գիտեր թէ ինչ կը
չահի գործն ու հեղինակը խժաւուր արխիւ
(դիւան), ռեսպուբլիկա (հանրապետու-
թիւն), սերիա (շարք), էպիգրաֆիկ (մի-
ջանկեալ դէպքի), իմունիտետ (ազատու-

թիւն), ռեստավրացիայ (նորոգութիւն),
օտար բառերու գործածութեամբ:

Տարակոյս չկայ որ ասիկա մեղք մըն է
մեր լեզուն զէմ կատարուած, մանաւանդ
երբ հեղինակը յաճախ այս օտար բառե-
րուն հայերէնը գործածած է նոյն տողե-
րուն մէջ:

Ամէն պարագայի տակ ընտիր ձեռնարկ
մըն է, խղճմտօրէն կատարուած, որուն
համար հեղինակը մեծապէս գնահատելի
է: Շնորհակալութիւն թէ՛ իրեն և թէ՛
հրատարակչներուն, այսպէսով կարե-
ւոր աղբիւր մը մեղի մատչելի ընելով:



ՎՐԱՅ ԱՂԲԻԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ
ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ: Հատոր Գ.: Գրեց՝
Պրոֆ. Լ. Մելիքեթ-Բէկ: Լաքակազմ,
ուրաքալ, էջ 346: Երեւան, 1955:

Շարքին երրորդ հատորն է ասիկա: Ա-
ռաջին երկու հատորները հրատարակուե-
ցան Երեւան, 1934 և 1936 թուականնե-
րուն:

Ընտիր և արժէքաւոր հրատարակու-
թիւն մըն է, որ կը պարունակէ ԺԲ. և
ԺԺ. դարու նիւթեր, այսինքն Հայոց մա-
սին՝ Վրաց ժամանակագրութեանց մէջ
եղած քաղուածներ և մատենագրական ու-
րիշ նիւթերէ եղած յառաջընթացներ:

Փրոֆ. Մելիքեթ-Բէկ խղճմտօրէն և
մանրամասնօրէն կը ներկայացնէ իր աղ-
բիւրները և իր կողմէ առանձին կը ծա-
նօթագրէ, մանրամասնօրէն տալով բաղ-
մատեսակ լուսարանութիւններ:

Յաւելուածին մէջ կու տայ Հայաստա-
նը և Հայերը ԺԲ-ԺԸ դդ. Վրաց գեղար-
ուեստական գրականութեան մէջ:

Գործին վերջը կը տրուի անձնանունե-
րու ցանկ մը, որ հեշտութեամբ գործածե-
լի կ'ընէ երկը:

Տպագրութիւնը թէեւ խնամով, սակայն
թուղթը լաւորակ է ցաւալիօրէն:

Այսպէսով բանասիրութեան գործածելի

